ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ԵՔ-ԲԸԱՀԾՁԲ-17/33»

ք. Երևան

31-ը հունվարի 2017թ.

Երևանի համայնքը, որն այսուհետ անվանվում է «Պատվիրատու», որի անունից հանդես է գալիս Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանը, մի կողմից, և «Լոկատոր» փակ բաժնետիրական ընկերությունը, որն այսուհետ անվանվում է «Կատարող», ի դեմս տնօրեն՝ Արման Խաչատրյանի, որը գործում է Կատարողի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, հետագա շարադրանքում միասին անվանվելով «Կողմեր», հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 655-Ա որոշումը և ՀՀ կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 1-ի N 1214-Ա որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետը, կնքեցին սույն Պայմանագիրը (այսուհետ՝ «Պայմանագիր») հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևանի 100% մասնակցությամբ «Փարկինգ Սիթի Սերվիս» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ նաև Ընկերություն) բաժնետոմսերով հավաստված իրավունքների հավատարմագրային կառավարման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ ի շահ Երևանի համայնքի՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Հավատարմագրային կառավարման ծառայությունների մատուցման նպատակով Կատարողն ընդունում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և Ընկերության կանոնադրությանը համապատասխան Ընկերության ստորև նշված բաժնետոմսերով հավաստված հետևյալ իրավունքները (հավատարմագրային կառավարմանը հանձնված իրավունքները այսուհետ անվանվում են «Գույք»).

Թողարկողը՝ «Փարկինգ Սիթի Սերվիս» փակ բաժնետիրական ընկերություն

թողարկողի պետ. գր. օրը՝ 27.09.2012թ. (գրանցված է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության տարածքային բաժնի կողմից)

գրանցման համարը՝	264.120.710805
վկայական՝	03Ա860805
գտնվելու վայրը՝	ՀՀ, ք.Երևան, Ազատության 27
բաժնետոմսերի տեսակը՝	հասարակ (սովորական) անվանական
թողարկման ձևը՝	ոչ փաստաթղթային
անվանական արժեքը՝	1000 (հազար) դրամ
բաժնետոմսերի քանակը՝	100 (հարյուր)
բաժնետոմսերի գումարային անվանական արժեքը՝	100000 (հարյուր հազար) ՀՀ դրամ
բաժնետոմսերի տարբերակիչ ծածկագիր՝	AMPRCSS10ER33:

1) Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի և խորհրդի իրավասությանը վերապահված որոշումները գրավոր ձևով, հետևյալ հարցերով միանձնյա ընդունելու իրավունքը.

ա. Ընկերության գործադիր մարմնի նշանակումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

բ. ժողովի վարման կարգը, հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը.

գ. տարեկան և արտահերթ ժողովների գումարումը, ժողովների օրակարգի հաստատումը, ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվա, ամսվա, ամսաթվի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը, որոնք կապված են ժողովների նախապատրաստման ու գումարման հետ և վերապահված են խորհրդի իրավասությանը.

դ. գույքի շուկայական արժեքի որոշումը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով.

ե. Ընկերության վերապահված հանձնաժողովի (

զ. Ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.

է. Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը.

ը. Ընկերության աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը.

թ. Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը.

ժ. Ընկերության հաստիքացուցակի հաստատումը:

1.3 Գույքը հավատարմագրային կառավարման հանձնելը չի հանգեցնում Գույքը և բաժնետոմսերը Հավատարմագրային կառավարչի սեփականությանը փոխանցվելուն:

1.4 Ծառայությունը մատուցվում է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

1.5 Սույն պայմանագրի գործողության ժամկետը սահմանվում է մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը: Եթե մինչև սույն կետով սահմանված ժամկետը լրանալը կողմերից որևէ մեկը չի ձեռնարկում միջոցներ Պայմանագիրը դադարեցնելու համար, ապա այն՝ սահմանված պայմաններով երկարաձգված է համարվում մինչև 2026թ. դեկտեմբերի 31-ը: Ընդ որում յուրաքանչյուր տարի, բացառությամբ 2017 թվականի, Ծառայությունը մատուցվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության հիման վրա կողմերի միջև կնքված համաձայնագրի հիման վրա:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ՝

2.1.1 Վերահսկել Կատարողի կողմից՝ սույն Պայմանագրի 2.3.4 կետում նշված որոշումների ընդունումը՝ Կատարողին՝ նշված որոշումների ընդունմանը իր գրավոր համաձայնությունը ներկայացնելու միջոցով: Ընդ որում, Պատվիրատուն չպետք է չհիմնավորված մերժի նման համաձայնության տրամադրումը: Տվյալ հարցերի համաձայնեցման համար Պատվիրատուն, ի դեմս իր լիազորած մարմինների, պարտավոր է Կատարողից համապատասխան հարցումը ստանալու պահից տաս աշխատանքային օրերի ընթացքում տրամադրել որոշման ընդունմանը իր համաձայնությունը կամ պատճառաբանված մերժումը: Եթե նշված ժամկետի ընթացքում Պատվիրատուն չի ներկայացրել իր համաձայնությունը կամ պատճառաբանված մերժումը, որոշման ընդունումը համարվում է Պատվիրատուի հետ համաձայնեցված:

2.1.2 Պայմանագիրը դադարելիս (լուծվելիս)՝ Պատվիրատուն Կատարողից ընդունում է հաշվետվություն՝ հավատարմագրային կառավարման գործունեության վերաբերյալ և Գույքն ընդունում է իր հաշվառմանը:

2.1.3 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.4 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.5 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐ Է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկա[illegible]

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.2.3. ապահովել Պայմանագրի 1.2 կետում նշված բոլոր իրավունքների անխոչընդոտ իրականացումը Կատարողի կողմից:

2.2.4 Պայմանագրի ողջ ժամկետի ընթացքում զերծ մնալ Գույքի նկատմամբ ցանկացած գործողություններից, որոնց կատարումը մտնում է Կատարողի իրավասության մեջ:

2.3 ԿԱՏԱՐՈՂՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ (ՉՈՒՆԻ)՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3.2 Գույքի նկատմամբ, ի շահ Պատվիրատուի, կատարել ցանկացած իրավաբանական ու փաստացի գործողություններ, բացառությամբ բաժնետոմսերի օտարման և գրավադրման:

2.3.3 Պայմանագրի գործողության ողջ ժամկետի ընթացքում Հավատարմագրային կառավարիչը Ընկերության նկատմամբ ունի Հիմնադրի պարտականությունները և իրավազորությունները՝ սույն Պայմանագրի շրջանակներում:

2.3.4 Պայմանագրի 1.2. կետում և դրա բոլոր ենթակետերում նշված գործողություններից բացի այլ գործողություններ Կատարողն իրավունք ունի կատարել միայն Պատվիրատուի գրավոր համաձայնությամբ՝ տրված նրա անունից հանդես եկող համապատասխանաբար Երևան քաղաքի ավագանու կամ Երևանի քաղաքապետի կողմից՝ Պայմանագրի 2.1.1 կետով նախատեսված կարգով:

2.3.5. Կատարողի՝ Պայմանագրի 2.3.4 կետով նախատեսված կարգավիճակով գործելու մասին ցուցումների (Երևան քաղաքի ավագանու կամ Երևանի քաղաքապետի որոշում) բացակայության դեպքում Կատարողն երրորդ անձանց հանդեպ պարտավորվում է անձամբ և պատասխանատվություն է կրում միայն իրեն պատկանող գույքով:

2.3.6 Կատարողն իրավունք չունի երրորդ անձանց հանձնարարել սույն Պայմանագրով իր վրա դրված պարտականությունների կատարումը, բացառությամբ այն դեպքերի, երբ՝

ա) այդպիսի հանձնարարությանը ստացվել է Պատվիրատուի գրավոր համաձայնությունը (Երևան քաղաքի ավագանու կամ Երևանի քաղաքապետի որոշում).

բ) ի հայտ են եկել հանգամանքներ, որոնցում նման հանձնարարությունն անհրաժեշտ է Պատվիրատուի շահերի ապահովման համար, և Կատարողը հնարավորություն չունի ողջամիտ ժամկետում ստանալ Պատվիրատուի ցուցումը (Երևան քաղաքի ավագանու կամ Երևանի քաղաքապետի որոշում): Կատարողը պատասխանատվություն է կրում իր կողմից ընտրված հանձնակատարի գործողությունների համար, ինչպես իր սեփականի:

2.3.7 Հավատարմագրային կառավարման գործողությունների արդյունքում Կատարողի ձեռք բերած գույքն ու իրավունքները (այսինքն՝ Ընկերության լրացուցիչ տեղաբաշխվող բաժնետոմսերով հավաստված իրավունքները) հանդիսանում են Գույքի մաս և անցնում են Կատարողի հավատարմագրային կառավարմանը՝ Պայմանագրով սահմանված պայմաններով:

2.4 ԿԱՏԱՐՈՂԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 բարեխղճորեն իրականացնել տրամադրված Գույքի կառավարումը, այդ թվում՝ Գույքի նկատմամբ օգտվել Պայմանագրի 1.2. կետում հիշատակված իրավունքներից՝ սույն Պայմանագրում սահմանված սահմանափակումներով:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 առանց Պատվիրատուի գրավոր համաձայնության չօտարել, գրավ չդնել և վարձակալության չհանձնել Ընկերությանը [illegible]

2.4.5 ոչ ուշ քան մինչև 2017 թվականի հոկտեմբերի 1-ը Պատվիրատուին ներկայացնել հավատարմագրային կառավարման ծրագիր:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև յուրաքանչյուր ամիս մատուցված ծառայության համար հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Իր կողմից հաստատված Ծառայության մատուցման հանձնման-ընդունման արձանագրությունը (Հավելված 3) և Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1) Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 3-րդ աշխատանքային օրը, բացառությամբ դեկտեմբեր ամսին մատուցած ծառայության հանձնման-ընդունման արձանագրության, որը Պատվիրատուին ներկայացվում է դեկտեմբերի 28-ին:

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն Պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Սույն Պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը, մինչև պայմանագրի ժամկետը (2021 թվականի դեկտեմբերի 31-ը), լրանալը կազմում է 420000000.0 (չորս հարյուր քսան միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ՝ ԱԱՀ-ն, որը հաշվարկված է յուրաքանչյուր տարվա համար՝ 84000000.0 (ութսունչորս միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ՝ ԱԱՀ-ն հաշվարկով: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

Պայմանագրի գործողության ժամկետը սույն պայմանագրի 1.5 կետով սահմանված կարգով երկարաձգվելու դեպքում, մատուցվելիք ծառայության գինը և վճարման պայմանները գործում են սույն բաժնով սահմանված կարգով:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են: ,

4.3 Եթե Պայմանագրի գործողության յուրաքանչյուր տարվա արդյունքներով արձանագրվում է, որ տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը նեռառյալ

համայնքի բյուջե փաստացի մուտքագրված գումարը (ավտոկայանատեղի վճարի և դրա չվճարման հետևանքով գանձված տուգանքի գումարների համագումարը)

1) պակաս է 1200000000 (մեկ միլիարդ երկու հարյուր միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամից, ապա Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ Երևանի համայնքի բյուջե փաստացի չմուտքագրված գումարի 10 տոկոսի չափով, բայց ոչ ավելի քան սույն Պայմանագրի 4.1 կետում նշված Ծառայության տարեկան գումարը: Ընդ որում սույն ենթակետով նախատեսված տուգանքի գումարը՝

ա. հաշվարկվում և հաշվանցվում է հաջորդող տարի Կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարվելիք գումարներից: Տուգանքի գումարի հաշվանցումն իրականացվում է տվյալ տարվա համար մատուցման ենթակա ծառայության համար կնքվող համաձայնագրով սահմանված ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ.

բ. Կատարողը պարտավորվում է մինչև հաջորդող տարվա փետրվարի 15-ը վճարել Պատվիրատուին, եթե չի նախատեսվում կնքել սույն պայմանագրի 1.5 կետով նախատեսված համաձայնագիրը, կամ ավարտվել է Ծառայության մատուցման համար սույն պայմանագրով սահմանված կետով նախատեսված ժամկետը.

2) ավել է 1200000000 (մեկ միլիարդ երկու հարյուր միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամից, ապա Պատվիրատուն Կատարողին, որպես լրացուցիչ վարձատրություն, վճարում է ավել հավաքագրված գումարի 10 տոկոսը: Ընդ որում սույն ենթակետով նախատեսված գումարը Կատարողին վճարվում է մինչև հաջորդող տարվա փետրվարի 15-ը և, եթե սույն Պայմանագրի 1.5 կետով նախատեսված համաձայնագրով չի սահմանվում այլ ժամկետ:

4.5 Եթե ընթացիկ տարվա ընթացքում Կատարողն իր ձեռնարկատիրության գործունեության արդյունքում Ընկերության համար կապահովի Պայմանագրով մատուցման ենթակա Ծառայության հետ չկապված և դրանով չպայմանավորված հավելյալ շահույթ, ապա Կատարողն իրավունք ձեռք կբերի Պատվիրատուից պահանջել իրեն վճարել հավելյալ շահույթից լրացուցիչ վարձատրության գումար, որի չափը կորոշվի մինչև 2017 թվականի հոկտեմբերի 1-ը Պատվիրատուին ներկայացվող հավատարմագրային կառավարման ծրագրով, որը հաստատվում է Երևան քաղաքի ավագանու որոշմամբ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ Պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

Տուգանքը հաշվարկվում է Պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր, բացառությամբ 2017 թվականի, որը հաշվարկվում է սույն Պայմանագրի հիման վրա 2017 թվականին մատուցվելիք ծառայության գումարի նկատմամբ:

5.3 Պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

6.1 Պայմանագրով և դրա հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման ու Պայմանագրից ծագող իրավունքը «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» բաց բաժնետիրական ընկերության կողմից «ԱՐՄԵՆԲՐՈԿ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Հաշվի օպերատոր) միջոցով վարվող ռեեստրում գրանցելու պահից և տարածվում է Կողմերի միջև 2017թ. հունվարի 1-ից փաստացի ծագած հարաբերությունների վրա:

Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում Պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցները չեն նախատեսվել կամ, եթե լուծվել է «Փարկինգ Սիթի Սերվիս» փակ բաժնետիրական ընկերության հետ կնքված Երևան քաղաքում ավտոկայանատեղերի կազմակերպման ծառայությունների մատուցման գնման պայմանագիրը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը Պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի Կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի

Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Պայմանագիրը դադարելիս (լուծվելիս) Կատարողը պարտավոր է վերադարձնել Գույքը Պատվիրատուին (Ընկերության բաժնետերերի ռեեստրում համապատասխան գրառում կատարելու միջոցով) ոչ ուշ քան Պայմանագիրը դադարելու պահից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

7.8 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.9 Պայմանագիրը կազմված է 7 թերթից, կնքվում է երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի երրորդ օրինակը տրվում է Հաշվի օպերատորին՝ առանց հավելվածների:

7.10 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.11 Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Երևանի համայնք	«Լոկատոր» ՓԲԸ
ք. Երևան, Արգիշտիի 1	ք. Երևան, Կոմիտասի պող. 36ա
Կենտրոնական գանձապետարան	«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900012005048	Հ/Հ 1930011489910100
ՀՎՀՀ՝ 02593108	ՀՎՀՀ՝ 00095651
_____ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ	_____ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1

«___»_____ 2017 թ. կնքված N_____

ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Բնութագիրը

1. Հավատարմագրային կառավարման ծառայությունների մատուցման պարտավորության շրջանակ և հավելյալ վարձատրություն

1.1 Ի շահ Երևանի համայնքի հավատարմագրային կառավարման ծառայությունների մատուցման նպատակով Կատարողն ընդունում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և «Փարկինգ Սիթի Սերվիս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրությանը համապատասխան ընկերության բաժնետոմսերով հավաստված հետևյալ իրավունքները՝

1) Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի և խորհրդի իրավասությանը վերապահված որոշումները գրավոր ձևով, հետևյալ հարցերով միանձնյա ընդունելու իրավունքը.

ա. Ընկերության գործադիր մարմնի նշանակումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

բ. ժողովի վարման կարգը, հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը.

գ. տարեկան և արտահերթ ժողովների գումարումը, ժողովների օրակարգի հաստատումը, ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվա, ամսվա, ամսաթվի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը, որոնք կապված են ժողովների նախապատրաստման ու գումարման հետ և վերապահված են խորհրդի իրավասությանը.

դ. գույքի շուկայական արժեքի որոշումը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով.

ե. Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը.

զ. Ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.

է. Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը.

ը. Ընկերության աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը.

թ. Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը.

ժ. Ընկերության հաստիքացուցակի հաստատումը:

2. «Փարկինգ Սիթի Սերվիս» փակ բաժնետիրական ընկերության ակտիվների և պասիվների կառավարում

Կատարողը պարտավոր է ապահովել «Փարկինգ Սիթի Սերվիս» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերով հավաստված իրավունքների այնպիսի կառավարում, որով կբարելավվեն նշված ընկերության 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ առկա ֆինանսական ցուցանիշները:

Ոչ արդյունավետ կառավարմամբ ֆինանսական ցուցանիշների վատթարացումը, ինչպես նաև տեղական վճարի հավաքագրումն

Ծառայությունների մատուցման պարտավորության թերի կատարում, ինչը հիմք կհանդիսանա Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման համար:

Ծառայության մատուցման ժամկետը	
Սկիզբը	Ավարտը
Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	Մինչև 31.12.2021 թվական

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի համայնք
ք. Երևան, Արգիշտիի 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900012005048
ՀՎՀՀ՝ 02593108

Կ.Տ. Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ
«Լոկատոր» ՓԲԸ
ք. Երևան, Կոմիտասի պող. 36ա
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930011489910100
ՀՎՀՀ՝ 00095651

Կ.Տ. Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հավելված 2
«____» _____ 20 թ. կնքված
N_____ ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը տարի
1.	«Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ բաժնետոմսերով հավաստված իրավունքների հավատարմագրային կառավարման ծառայություններ	7000000.0	14000000.0	21000000.0	28000000.0	35000000.0	42000000.0	49000000.0	56000000.0	63000000.0	70000000.0	77000000.0	84000000.0	84000000.0

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի համայնք
ք. Երևան, Արգիշտիի 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900012005048
ՀՎՀՀ՝ 02593108

_____ Տ. ԹԱՐԳԱՐՅԱՆ
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Լոկատոր» ՓԲԸ
ք. Երևան, Կոմիտասի պող. 36ա
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930011489910100
ՀՎՀՀ՝ 00095651

_____ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Կ.Տ.

Հավելված 3

«____» _____ *20 թ. կնքված N* _____

ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____

հհ _____

_____

հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____

հհ_____

_____

հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«____» _____ *20 թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն՝ ի դեմս _____

Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____ և

Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը, հիմք ընդունելով նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայության							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____

ստորագրություն

_____

ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____

ստորագրություն

_____

ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 3.1
«____» _____ 20 թ. կնքված
N _____ *ծածկագրով գնման պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N -------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	Քանակական ցուցանիշը (փաստացի)	Չափի միավորը

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն